



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ
ԼԻՐԻԿԱԿԱՆ ՖՐՈՆՏ



891. 99
Ն - 93

ՊԵՏՏՐԱՏ 1932 ՑԵՆԿԱՆ

6 NOV 2011



891.99

Q-93

u.m.

Mr. Catherine Hapthi
Lyon - 1932

ՀԱՂԱՐԵԱԿ ՆՈՐԵՆՑ - 8

Հաճախում է

իր աչք

ԼԻՐԻՔԱԿԱՆ ՖՐՈՆՏ - 8

(Բանասերգիայի 3-րդ գիրք)

(1930 — 1932)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1932

582


12 JUL 2013

46588



4586-55

ՆԱԽԵՐԳԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ



Ո Տ Ա Ր Կ Ա Թ Ը

ԻՄ «ՅԵՐԿՐՈՐԴ ԳՐԲԻՆ»

Ահա չես տուն հմ դարձել
աշխատանքից՝ անընդուն,
և հուզական նոր դանձեր
շողշողում են իմ հոգում:
Հանքերից այն, քրտնաթոր
ուր հոգնել հմ և տըքնել,
մնացել են իմ սբտում
միայն վոսկու հատիկներ:

Ահա դարձել հմ չես տուն,
դանձերից իմ խնդության
և խոհերից իմաստուն
ուզում հմ ձեզ բաժին տալ,
իմ զավակներ, իմ չերգեր,
իմ պտուղներ աշնային,
վոր իմ արնով հմ չերկնել
և տվել մեր աշխարհին:

Սիրով մի խոր ու անձայն
չես շոյում հմ, փայփայում
վարսերը ձեր այս զեղձան,
ձեր հոգու խորքն հմ հայում.

ու... իմ սրտում կասկածի,
լեանդէի շէթեր են կաթում...
ձեր հոգու մեջ զգացի
ոտար հուշի խլրտում:

Տագնապում ե սիրտս հար
լեանդից այս նոր, նորածն...
մի թշնամի ե ոտար
ստինքից կաթ եք ծրծել...
Վճրտեղ ելիր, պահապան,
միտք իմ զգաստ, անհանդիստ,
վոր թշնամին գաղտնաբար
կաթ ե տվել զավակիս:

Թունափորումն այս սակաջն
թող անաղանգ դառնա քեզ,
վոր չերգերս հուղական,
անդաստիարակ մանկանց պես,
չթողնես դուքս, փողոցում,
առանց արթուն հսկումի,
և չլինի խանդը ցուրտ,
վոր հիմա չես զգում եմ:

Լ Ի Ր Ի Ք Ա Կ Ա Ն Ֆ Ր Ո Ն Տ

Լ Ի Ր Ի Ք Ա Կ Ա Ն Ֆ Ր Ո Ն Տ

Հավաքական կուռ կամքի պողպատե նոր հրաման,
կռվի բոլոր դաշտերում տեղաշարժ ե, զորաշարժ,
ընթանում են միշտ առաջ, խորանում դիրք, խրամատ,
միասնական դրոհ ե, միասնական մեծ արշավ:

Բարձրանում են հսկաներ, փոխում տեսքը մեր լերկրի,
ու նրանցով փոխվում ե ելուծվունը մեր կյանքի...
մեր ընթացքը արգելող թշնամական ձեռքերին
հատու հարվածն ե իջնում պողպատակուռ բանակի:

Քանդվում են արմատներ ցնցումներով, սուր ցավով,
վորպես ատամն ե քաշվում արմատահան ակցահով,
ցընցումները լերբ անցնեն՝ շուտով, շուտով անցավոր,
վերջին դիրքի վրա մեր դրոշակն ե ծածանում:

Դեռ ճակատներ կան համառ, դեռ կան խլրթին
ճակատներ,
քողված մեռնող աշխարհի ճահճախոտով, մամուռով,—
դա հույզերի, դա սրտի, ներաշխարհի ճակատն ե,
շառաչների դեմ հաճախ անտարբեր ու փակ դուռով:

Սակալն, ահա, դրոհի հարվածներից հաղթական՝
հաճանջում և թշնամին դեպի վերջին խրամատ,
ինչքան կուգե՝ թող լարի արնոտ դավեր ու թակարդ,
վերանում և հիմա նա, ապրում վերջին դրաման:

Այս հոյակապ բաղխումից, տեղաշարժից ընդհանուր,
ցընցըվում են սյուներիը մարդու ներքին հյուսթյան,
մարդն և փոխվում ժամե ժամ՝ ստանալով խթանում,
փոփոխումից ընդհանուր, վոր բերում և առույցան:

Հալածվում և թշնամին, վոր շատ անգամ անհրկատ
ապրում և մեր հույզերում ու յերբեմն գերում մեզ.
դեմ առ դեմ ենք պայքարում, լարում և ցանց ու ակնառ,
ու հերոս ես մեծանուն, թե հաղթում ես ինքդ քեզ:

—

Թ. Ա. Ն. Ա. Վ. Ա. Ս. Ա. Ն. Ա.

Ճերմակ, ճերմակ հախճապակի,—
փոքրիկ կլիանդրին իլիշի,
կլիանդրու առաջ՝ թանաքի
խստադեմ ու մուգ լիճը:

Դիտում, խորհում եմ ինքս ինձ,
դգում դերագուշն հաճույք,—
թվում և թե՛ դա Զագեսի
մանրանրկարն և անպաճույճ...

Գալարվում և ղեկավարի
արձանի հայացքի տակ
ջրի տարեքը վիթխարի,
փրփրուն, կոհակ-կոհակ:

Դառնում և նա շարժիչ ուժ,
դառնում և լույս ու կրակ,
լորբոքում կամք ու աշխույժ,
փոփոխում մեր կյանքն արագ:

Դառնում և միս ու արյուն
պատգամը ղեկավարի...
Նրա արձանը հրահրում,
հրահանգում և այստեղ վերից...

Յեւ յամեն մի տող գրելիս՝
նայում եմ նրա կիսանդրուն,
մտքերիս խուրձերը խոփ
նրա հալացքով սանրում:

Պարզում եմ չես ինձ ինքս,—
ինչպես այնտեղ, Զաքեսում,
այստեղ ել նայվածքն իր խիստ
միևնույն բանն է ասում:

Այստեղ ել տողերով չերգիս
թող ուժ և ջերմութուն դառնա,
դառնա լույս, ընթացք տա կյանքին՝
Զաքեսի մանրանրկաբն այս...

Ճերմակ, ճերմակ հախճապակի,
փոքրիկ կիսանդրին Իլիչի,
կիսանդրու առաջ՝ թանաքի
ուժերով հղի լիճը:

Յեղնում են նրանից տողեր,
վոթպես հոսանքն ուժի, լույսի,
կառուցման չերգով վողողեն
և շարժեն ուղեղ ու սիրտ:

Մ Ո Լ Ե Ս Ո Տ Ը

Վոսկեգլուխ հասկեր՝ դեղձան մազով,
դեփյուռներ չերգով ծածան-ծածան...
Համայնական հնձի չերգը այսօր,
սրտիս անծայրածիր արտից անցավ:

Յեւ, չեւ, վոր չես նույնպես հընձեմ
իմ չերգերի բերքը համայնական.
տեսա՝ կային խուրձեր, չերգի խուրձեր,
վորոնք իմը չեյին, վոչ ինձ համար չերգած:

Վոսկեհատիկ հասկեր՝ շեկ ցորենով հղի,
վորոմը կա արտում, մոլիխոտեր,
իմ չերգի մեջ, ահա, վորոմի պես դեղին,
այդ տողերը ոտաբ որորվում են, ո՛, դեռ:

Ահա հնձից հետո՝ աշնանացան,
մաքուր հատիկ է պետք, սերմը՝ զտուն...
Սիրտս աղմկում է մեքենաձայն,
կատարվում է հուլի, չերգի զտում:

Ն Ի Ր Ի Կ Ա Ն

Իմ չերգերում բաբախում ե իմ սիրտը,
 իմ արյունն ե կարկաշում իմ չերգերում.
 բայց իմ սիրտը արդեթք միայն մի սիրտ ե,
 ե այդ սրտում միայն իմ խնդն ե չեռում,
 կամ տխրության վաշակչանները անցողիկ,
 վաշակչանները մաքառողի, թախծողի:

Ո՛վ իմ մոտիկ, կամ հեռավոր ընկերս,
 չե՞ս զգում դու խլրտումը հուշերիդ,
 չերբ կարգում ես լիրիկական չերգերս.
 չե՞ս զգում դու մի ծանրություն ուսերիդ,
 մի ծանրություն, վոր ուսերից պոետի
 անցել ե իր չերգերին ու իր սրտին:

Մարտնչումի, կառուցումի ընկերս,
 իմ չերգերում յեթե դատը խորթ մի բան,
 դա քոնը չե, դա իմը չե, դա հետս
 հնից չեկած մնացորդ ե գաղտնապահ,
 վոր հավում ե, վոր կորչում ե սրից ուր
 վոգեմիտիման ընթացքի մեջ այս ցնցող:

Յես քամում եմ, յես դտում եմ հուշերս
 իմաստության, կուրդ կամքի քամիչով,
 ու տալիս եմ միտքս, կամքս ու սերս
 մեծ կառուցման պայքարներին անգիջում,
 թե իմ չերգում խորթ մի բան ե սպրդում,
 այդ ել քամիր, ընկեր, այդ ել դո՛ւր դու:

Ս Ր Ն Գ Ի Ս Ա Ս Ի Ն

Ա Լ Ա Ջ Ա Ն Ի Ն

Ո՛, հաճախ ինձ կշտամբում են,
 վոր չերգեր եմ գրում լիրիկ,
 վոր չերբեք չեկքի ճամբում իմ
 չես վոտքս ուղիղ չերբ:

Յես հաճախ, հաճախ խորհել եմ,
 խոհեր եմ ունեցել ալրող,
 ու ծանր, ծանր այդ խոհերը
 հոսել են իմ գրչի ծալքով:

Յեղել են, պահեր չեղել են,
 վոր ինձ զգացել եմ նվաստ,
 վոր իբր ուղիս շեղել եմ,
 կամ թողել եմ արշավ ու վաղք:

Դրա համար յերբեմն չեղել եմ՝
 բնական իմ ձայնը թողած,
 չես աչեպես սուր ճչացել եմ,
 վոր ինձ ե թվացել տհաճ:

Իմ չերգերում բաբախում ե իմ սիրտը,
 իմ արյունն ե կարկաչում իմ չերգերում.
 Բայց իմ սիրտը արդյ՞՞ք միայն մի սիրտ ե,
 ե այդ սրտում միայն իմ խինդն ե չեռում,
 կամ տխրության վաշտկաները անցողիկ,
 վաշտկաները մաքառողի, թախծողի:

Ո՛վ իմ մոտիկ, կամ հեռավոր ընկերս,
 չի՞ս դգում դու խլրտումը հուշերիդ,
 չերբ կարգում ես լիբիկական չերգերս.
 չի՞ս դգում դու մի ծանրություն ուսերիդ,
 մի ծանրություն, վոր ուսերից պոետի
 անցել ե իր չերգերին ու իր սրտին:

Մարտնչումի, կառուցումի ընկերս,
 իմ չերգերում յեթե գտար խորթ մի բան,
 դա քոնը չե, դա իմը չե, դա հետս
 հնից չեկած մնացորդ ե գաղտնապահ,
 վոր հալվում ե, վոր կորչում ե որից որ
 վոգեփոխման ընթացքի մեջ այս ցնցող:

Յես քամում եմ, յես գտում եմ հուշերս
 իմաստության, կովող կամքի քամիչով,
 ու տալիս եմ մխոքս, կամքս ու սերս
 մեծ կառուցման պաշտարներին անդլիշում,
 թե իմ չերգում խորթ մի բան ե սպրդում,
 այդ ել քամիր, ընկեր, այդ ել զտիր դու:

Ո՛, հաճախ ինձ կշտամբում են,
 վոր չերգեր եմ գրում լիրիկ,
 վոր չերբեք չեքի ճամբում իմ
 յես վոտքս ուղիղ չգրի:

Յես հաճախ, հաճախ խորհել եմ,
 խոհեք եմ ունեցել այրող,
 ու ծանր, ծանր այդ խոհերը
 հոսել են իմ գրչի ծայրով:

Յեղել են, պահեք չեղել են,
 վոր ինձ զգացել եմ նվաստ,
 վոր իբր ուղիս շեղել եմ,
 կամ թողել եմ արշավ ու վաղք:

Դրա համար յերբեմն չեղել եմ՝
 բնական իմ ձայնը թողած,
 յես այնպես սուր ճշացել եմ,
 վոր ինձ ե թվացել տհաճ:

Թողած շառաչուն ջրերը,
չերգել եմ առունները ջինջ,
չերգիս աճումը ջրել եմ
հույզերով մաքրաջուր, վճիտ:

Բայց չե՞ վոր հենց այդ առուն ել
թափվում ե ան մեծ հորձանքում,
վոր ջրերը առնում ենք,
լույսի չենք վերածում կյանքում:

Թողած պղնձե փողերը,
թողած շեփորը շառաչուն,
սրնգով չես ներբողել եմ
նոր կյանքը՝ չեղնող, հաբաճուն:

Իմ չերգն ել հենց դա նույն չերգն ե,
չերգված մի ուրիշ գործիքով,
նույն պալքաբն եներան չերկնել,
նույն կովի համար, նույն ճիգով:

Մի նայեք լիրիկ ձայնին իմ,
նայեցեք իմ չերգի վոգուհ՝
համահնչուն ձեր ձայներին,
մեր ամենքի աչս համերգում:

Յ Ե Ր Գ Ը

Անտիպատր, անտիական մեծ բանաստեղծ,
դեռ լսում եմ չես քո չերգը՝ խնդության ճիշ,
վոր հոսում ե անպես հստակ, անպես անեղծ,
հազարավոր տաբլիսների մուժի միջից:

Նման ե քո չերգը խարտյաշ, վճիտ մանկան
ան առաջին կանչին ցնծուն, բերկրալի, դոհ,
վոր թողնում ե սրտանց, չերք առաջին անգամ
խաղալիք ե տեսնում, չերջանկանում հոգով:

Արևի շուրջ քանի՜, քանի՜ հազար անգամ
չերկրադուհը շրջեց ինքնահոլով, խրթին,
մեռավ քանի՜ սերունդ, վորքան ձայներ հանգան,
բայց քո չերգը հասավ այս մեծ՝ մեր սերըդին:

Ջաղացքարի ան առաջին պտույտի մեջ
չերջանկության մի նոր դարադուխ տեսար,
ե քո սիրտը աճեց, բացվեց լուսեառեչ,
ե ունեցար հույզեր, հույզեր հազար տեսար:

Ու չերկնեցիր չերգդ ե պարզ, ե միամիտ,
այդ պարզության մեջ իսկ խորիմաստ ու հզոր.
ու քո չերգով՝ ահա, դարեր հետո, դարիդ
ամբողջ տեսչը, շունչը հասկանում եմ այսօր:



Քո այդ չերգից հետո, ջրաղացի առթած
խնդությունից հետո, վերքան մահ ու անկում,
քանի՜ վերելք, վայրենջք ու մաքտեբ սրաբրած
հորովվեցին արնով և արցունքով կյանքում,—

Մինչև մարդը հասավ այս անցերկրորդ կովին,
այս վերելքին՝ դեպի նոր, անարցունք մի կյանք.
այդ մենք, այդ մենք բացինք այս սահմանում մի վին,
այդ մենք ճորտության դեմ վերջին մարտի լեկանք:

Մարմնավորվում ե նա՝ մեր արյունով, մսով,
անցած հազարավոր տարիների մտրդկանդ
մեծ յերազը ահա, արմատանում հզոր,
հին Մոլոխի սրտին վերջին սուրբ զարկած:

Ո, Անտիպատր, նա մեծ ե, անչափելի,
վոչ թե այն գետափի ջրաղացի պես մի բան,—
առաջին կայանն և նա նոր ճամբաների,
վորով արշավում ե յերթը նոր մարդկութան:

Քո ջրաղացը փոքր եր, նույնպես ապրումը քո,
բայց նրա դեմ յերգը քո վորոտում ե մեծ,
իսկ այս նոր կյանքի կերտումը քրտինքով,
այնքան վիթխարի չե, իսկ մեր յերգը՝ տխուր:

Վոչ թե նվաստացումն և մեր ձախը բանտել,
չեվ վոչ հոգնածությունն և մեր յերգը խեղդում,
ո, վոչ, մենք ել մեծ ենք՝ ձեր մեծության հանդեպ,
բայց մեր գործի հանդեպ՝ մեր չերգն և թվում թույլ:

Այնքան մեծ ե գործը, ճակատն այնպես և լաչն,
հերոսությունն այնպես ընդհանուր և ցնցող՝
հաղար տարիների կուտակումից չեւած,—
այս գործը նախ պետք ե, պետք ե յերգել գործով:

Բացվում ես, առավոտ, սիրելի աչքի պես,
և աչքքան ցնծութուն կա այդ թարմ հայայքում,
կան հուլիներ խլրտուն, կամքեր կան դիմացկուն,
կրքեր կան մաքառող, խոհեր կան հեռատես:

Տեսնում եմ, առավոտ, լեռ քո ջինջ հայելում
մի ամբողջ աշխարհի կերտումը—նոր աշխարհ.
բարձունքներ կան հսկա, սլացիկ, վորպես փառք,
ծավալներ աներիդ՝ թռչքներ հմայելու:

Յեղնում ե, առավոտ, նոր մարդը պայքարով,
կերտում ե բարձունքներ և ինքը բարձրանում.
մարդը Մարդ ե արդեն, հերոս ե բարձրանուն,
հոգին իր խոյանք ե և կամքը՝ մաքառող:

Բացվում ես, առավոտ, սիրելի աչքի պես,
մարտ ու սեր և իղձեր կան քո թարմ հայայքում,
իղձերը ծաղկում են, սերերը հիացնում,
մարտերը վճռում են ու դու խոր ժպտում ես:

Հոկտեմբերյան որերի արյան պես, վոր ծերացած,
հին աշխարհին նոր կյանքի առավոտը հռչակեց,
դուրս են հորդում այս տոհմն, Հոկտեմբերյան
տարեդարձ,
դրոշները փողփողուն, կարմիր-կարմիր լաշակներ:

Լաշակների ծաղքերում, կարմիր-կարմիր դրքի պես,
պայքարների մեծ վեպը վերապրում ե և հուզում.
Քամին եջերն ե թերթում ու կարդում եմ հիմա լեռ՝
նոր աշխարհի հաղթանակ, հին աշխարհի փլուզում:

Հոկտեմբերյան քանդումի կամքը այսօր խտացած
ստեղծագործ կամքի մեջ՝ նոր աշխարհն և կառուցում.
ու Լենինյան բանակի հատվածները համընթաց
ավետում են աշխարհին նոր հաղթանակ ու ցնցում:

Ու թվում ե ինձ, ահա՛ լաշակների փողփողուն
այս հորձանքը խնդության, հաղթանակի ժպիտն ե,
վոր մեր կյանքի հոյակապ պայծառ դեմքն ե վողողում,
նոր աշխարհի դարբասից, լերը արդեն ներս ենք մտել:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԼԻՐԻԿԱ

Սիրտ, աչքան քնքուշ ես, սիրառատ,
սիրտ, խլրատուն հույզերի հեյզեր,
բիրտ ատելությամբ այսոր վառված՝
բիրտ քենը թող դառնա քեզ սեր:

Թող դեղին թույնը մահաբաղձ,
թող քենը չեռա դառնահամ—
վոխ, վրեժ, կռվի կերք ու մաղձ
վոխերիմ չերգեր թող դառնան:

Թույն չեղիր անցյալի համար,
թույն չեղիր, մահ՝ թշնամուն մեր,
դու չեղի մրգահաս ամառ,
դու դարձիր թշնամուն ձմեռ:

Հուր ես դու և նորն ես ձուլում,
հուր չեղիր՝ անցյալը խանձիր,
սուր չեղիք, խրվիր անցյալում,
սուր չեղիր, դաժան, մահաձիրն:

Մահ չեղիր հնի համար դու,
մահ չեղիր, վոր կյանքը աճի.
ջահ չեղիր՝ նորին լուսատու,
ջահ՝ հնի թաղման ճաճանչիր:

Սիրտ, լիրիկ ես չեղել, սիրառատ,
սիրտ, սիրո, խընդության հեյզեր,
բիրտ ատելությամբ այսոր վառված՝
բիրտ վոխը թող դառնա քեզ սեր:

Փ Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Դիտում եմ գլուխդ վոսկեզանգուր
և աչքերդ՝ արշալույսներ չերկու...
և չես հասկանում եմ, վոր մի անգուլթ,
մի անամոք թախիծ ե հեկեկում,—
թեահատ մի կարոտ կա քո կյանքում,
վոր սբտումդ միշտ իր չերգն ե չերգում:

Թող լինի, թող լինի նա անկատար,
թքիր դու թախիծին ու մաղձին,
թող քո կամքը, կամքը՝ վորպես թարթառ,
ջրասուչդ անի ցավդ հնածին
և քո կյանքը շպրտի անվըթար
մեր ափը՝ չեւթի, կառուցման, հնձի:

Միայն, այդ միայն կբուժե հոգիդ,
կլեցվես ահեղ վրեժով մի դու,
մեկամաղձության փոխարեն՝ կրկին
պալքարի, կովի չեբզը քո սբտում
պիտի վորոտա, պիտի մըրկի
անասնձ մի ցասում և կյանքդ թընդուն
խառնե մեր կովի հոոր հորձանքին:

Միայն ամենքով և ամենքի հետ
կգառնա կամքդ վճռական, ամուր.
Թող անհատական ամեն արահետ,
ընթացիր մեր լայն ճամբով ընդհանուր,
չերբ ամբողջի մեջ քոնը կռահես՝
քո կամքը կզգա մի նոր խթանում:

Յերբ զգաս, զգաս, վոր զարկդ հատու՝
մեր միասնական բռունցքների մեջ՝
կյանքի խոցերի կծիկն ե քանդում,—
քո սբտում կրկին կբացվի նոր եջ՝
կովի, կառուցման, սիրո մի անդուլ՝
նոր հմայքներով լեցուն չեւեմեջ:

Յերբ կամքդ, կյանքդ իր մասը բերի
այս մեր ընդհանուր, մեծ կատարումին,—
սբտիդ զարկված այն իղձը թերի
կթվա չնչին, և հազար ու մի
իղձեր կկանչեն քեզ նոր ափերից՝
առանց տանջանքի և դալարումի:

Ա Չ Ք Ե Ր Ը

Այնքան խիստ կա քո աչքերում,
վոր թաղված ե տխրության տակ,—
ինչպես հատակ, վճիտ լճակ,
վորի դեմքին՝ քամին բերում,
փռու Քող ե քաշում բարակ:

Վառվում ե, տես, մեր որերում
նոր կյանքի մի նոր արեգակ,
մեր ամենքիս կրճերի տակ
պայքարելու կիրքն ե չեռում
և կերտելու տենչը անհագ:

Այս որերում հրահրուն՝
կըրճիդ տակից սիրտդ արագ
թող խնդության թափով վայրագ
քո աչքերից վանե հեռու
տխրության այդ քողը բարակ:

Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ

Հաղթանակի տարեդարձ, ցնծության տոն, ցնծություն,
Հոկտեմբերը աշխարհին՝ նոր առավոտ, ալգարաց.
ամբողջ աշխարհն ե ցնծում, չես եմ ցնծում, ցնծա դու
և ցնծությամբ սբտիս դեմ սիրո առավոտը բաց:

Թող ցնծության այս տոնին վոչ մի ստվեր մեր
սբտում
մեր խնդության լույսերի ծփանքները չաղտաի,
միայն կովի կրակով բոցավառվենք չես ու դու,
այլենք բոլոր թերերը չեբաղանքի, կարոտի:

Հոկտեմբերը թող հորդի մեր սբտի մեջ և արջան,
համահնչուն բաբախե սիրո չեբակն որվա հետ,
թող անձնական իմ սեբը, լիբիկ չեբգերս անվարան
այս տոնական ծփանքին ձուլվեն անդարձ, թերթ առ
թերթ:

Ու թող նեբքին կրակից՝ դեմքիդ վառվեն ժպիտներ,
դրոշների նման այս, վոր ծփում են քաղաքում.
դրոշների ծփանքը, վոր մեր կյանքի ժպիտն ե,
պայքարներով ե սընվում և արյունով ե ծաղկում:

Բ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Յ Ե Ր Գ Ը

Ե Դ Ո Ւ Ա Ր Դ Ի Ն

Յերազեկ եմ լես մի ուր
այս լեռների գմբուխտը,
Ժաչուները այս ահավոր,
դեղին, դեղին այս տուղտը,
ծաղիկները՝ բույր ու շող,
կանաչները՝ թավիշե,
առվակները՝ սեր հուշող, —
սաբի վրա պարզ գիշեր:

Բայց իմ հողին, իմ հողին՝
աբրշխ ուրիշ մի չերգով,
սլանում ե մոլեգին
այս հաճույքի չեղերքով, —
վոթական ահեղ մի բաղե,
թողած անհուն մի գետին,
սուր սլացքովն իբ վաղե,
ուղիղ զարկե մի կետի...

Կխաղաղվես, իմ հողի,
շահթասըլաց իմ բաղե,
չերբ կյանքն առանց մորմոքի՝
դաշտերում իսկ ավաղե
տրոփե մի խնդուծչան,
չերջանկուծչան մի դարկով...
Հիմա ահեղ դրդա
պաշտարի մեջ քո յերգով:

Կանդերադառնամ լես մի ուր
այս լեռների գմբուխտին,
Ժաչուերին այս ահավոր,
դեղին, դեղին այս տուղտին,
ծաղիկներին՝ բույր ու շող,
կանաչներին՝ թավիշե,
առվակներին՝ սեր հուշող, —
սաբի վրա պարզ գիշեր:

—

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԼԻՐԻԿԱՆ

ՃԵՐՄԱԿ ԿՏԱՎԸ

Տարիներ են անցել հերոսական, վարար,
և աճել և կլանքը, փռվել հասուն, փողփող.
տարիներ են անցնում որվա նման արագ,
և որվա մեջ տարին խտանում և ամբողջ:

Յեվ աճն այնքան և բարձր, թափն այնչափ և արագ,
սիլ ժամանակ ունի՞ դառնա նայի լետե...
Բայց լիս հիշում եմ միշտ, վոր տարիներ առաջ
սրտիս վրա մի բան ճերմակ ստվեր նետեց...

Դա ստվեր չէր, փայլ եթ, բացվող պատուհանից՝
վորպես արևի շողք, վորպես մի շերտ լույսի, --
այն առաջին կտավն, վոր մեքենան հանեց,
հպարտորեն կապեց լերկրիս արնոտ ուսին:

Ու լերդեցի լիս պարզ ցոլացումն այդ դեռթող,
ճերմակ այդ կտավը, կտափն այդ հասարակ,
և նոր որեր լեկան խորհրդային ռիթմով, -
հերոսութունն ու կամք՝ հզոր, բանակ-բանակ...

Ու բարձրացան շենքեր, ու շէականեր անդուլ
յերկաթավոր որեր ավետեցին շռալ,
գալարվեցին կապույտ առուները հանդում,
ու վառվեցին լույսե՜ր քաղաքների վրա...

Բայց իմ սրտում մնաց անջնջելի, վառ-վառ,
ճերմակ փայլը՝ ճերմակ աչք կտավի.
տեսնում եմ չես փայլն աչք փողոցներում փռված
և աչքերում ժպտուն առուների ծավի:

—

Փ Ա Ր Տ Ե Ձ Ը

1.

Ժամը տասներկունսն եր, չերբ տուն դարձա.
չես հազվագեպ եմ գնում սինեմա...
քիչ բան եմ հիշում չես աչք ընդարձակ,
հատվող և հոսող պատկերից հիմա:

Հիշում եմ միայն մի ճերմակ վրան.
արշավող գնդի շտաբն եր կարծես.
նստած ելին լուռ: Սեղանի վրա
տարածված եր մի սպիտակ քարտեզ:

Մեկը ըզրորի հայացքը փնջած՝
սուր սեռեւ եր մի կետի, ինքն ել
խոհուն գծում եր... և լորպես միջատ,
մատիտն ածում եր սե-սե ձվիկներ:

Հենց աչք վալրկյանին, ծայրը մատիտի
քարտեզի վրա, չերբ ձուն եր գնում,
վրանը փոխվում եր մի ահեղ մարտի,
բանակը մի նոր քաղաք եր մտնում:

Սհա աչք, ինչ վոր հիշում եմ հիմա,
բայց գիտե՞ք ինչո՞ւ հենց աչք եմ հիշում,
և մոռացության քամին խորիմաստ
հենց աչք իմ մտքից հեռու չի քշում:

Ամեն իրիկուն, յերբ տուն եմ գառնում,
և յերբ անցնում ե հոգնությունն որվա,
մտքիս մեջ ամփոփ նոր կյանք ե առնում
մեր կառուցումը հարված առ հարված:

Ուղեղիս ճերմակ քարտեղի վրա
Հնգամյակն իր լալն վոստաջնն ե հինում...
Այնտեղ, ուր յերբեք չի վառվել կրակ,
սոցիալիստական քաղաք ե դնում:

Անհետանում են անապատ, ճահճուտ,
և անտառներ են ընկնում դարավոր,
անապատներում ծառեր են աճում,
և քաղաքներ են յեկնում արևոտ:

Գետերը իրենց ընթացքն են փոխում,
և կամըրջվում են ափերը նրանց.
նոր ու յերկաթե գծեր են սողում,
յերկրի ծալքերը միացնում իրար:

Յեվ այդպես ահա, այդպես ամեն ուր,
քարտեղի վրա նոր կետ ե կընքվում.
ու խտանում են կետերը այդ նոր,
ինչպես աստղերը անամպ յերկընքում:

Ե՛լ, մտքի անկանգ, խոլական թռիչք,
ալն, վոր տևում ե տարիներ, դարեր,
կարող ես դու մի վայրկյանում դնութիչ
եկրանի վրա ուղեղիս՝ շարեւ:

Բայց այդպես, այդպես հեշտ ու անխըռով
չի կերտվում կյանքը, ինչպես մի քարտեղ,
նա կառուցվում ե կատաղի կըռվով,
և կռիվ, վորքան, վորքան դու բարդ ես:

Ու վոչ թե, վոչ թե միայն քահակն ե,
միայն պատկերն ե, ձեն ե ելական,—
կյանքը փոխելու համար՝ բանականեր
մարտեր մղելու ասպարեղ յեկան:

Տեսնում եմ, զգում, շոշափում ահա
այդ նոր կառուցման իմաստը, դուցե
նա վոչ մի, վոչ մի քարտեղի վրա
չի կարող պատկեր ստանալ ու ձև:

Լուկ պետք ե կռվել, կռվելով մերվել
այդ նոր, հոյակապ ստեղծման գործին,
դեմ գործի մեջ սիրտ, միտք ու ներվեր,
զգալ հյությամբ ամեն շենք ու ծիլ:

Փոխվում ե վոչ թի միայն մի քարտեղ,
փոխվում ե կյանքը համայնապարփակ,
փոխվում ե մարդը, փոխվում ե անտես
աշխարհը մարդու, նրա կրծքի տակ:

Գործի վեհուկթյամբ մենք վոգեկորված,
դժվարուկթյան դեմ մղելով կռիվ,
տարված գործերով մանր ու առոյրյա,—
չերբեմն ամբողջը չենք տեսնում լրիվ:

Բացք, չերբ նայում ենք հստակ աչքերով
մեր նոր աշխարհին ամբողջ, լացնածիւր,
նրա վերելքին, ծաղկումին գերող,
չերեւելթներին պես-պես, նորածին,—

Անսահման, անհաղթ մի հպարտություն
ե հերոսության մի վեհ դպացում
համակում ե վողջ աշխարհը մարդու,
ե կառուցումը ել աբազադնում:

Ու դրա համար ամեն իրիկուն,
չերբ աշխատանքից չես տուն եմ գառնում,
մեր չերկրի չուն ու զեռը աղմըկում
քարտեղիս վրա նոր ձե են առնում:

Փ Ո Ղ Ո Ց Ը

Յես անցնում եմ ամեն որ նույն փողոցով,
չերկշաբ ծառերն փղջունում են ամեն որ
լեմ ակառջին առավոտյան խշշոցով
հաղարածայն չերգում են պարզ չերգ մի նոր:

Այս փողոցը, վորից ամեն, ամեն որ
չես անցնում եմ առույգ քալելով, սրտարաց,
նմանվում եմ մի բերանի ալեոր՝
ատամները սև ու խարխուլ ե թափած:

Անցքեր դեռ կան, վորից ատամն ե ընկած,
մնացել են շենքից միայն սև հեռքեր,
կան տնակներ կիսաքանդ ու ծուռ կըքած,
ատամի պես, ատամի պես վորդնկեր:

Բացք տեսնում եմ հիմա, սրտի բաբախով,
բարձրանում են մաքուր, վոսկի ատամներ,
ու բացվում են ժպտով, վորպես ուրախ որ,
պատուհաններ նոր՝ փողոցի վրա մեր:

Ու հիմա, չերբ անցնում եմ այս փողոցով,
մեր ծառերն իսկ, մեր ծառերն իսկ չերգում են
մեծ կառուցման չերգը կալտառ խշշոցով,
վոր փոխում ե անծալբածիւր չերկրում մեր:

Լ Ո Ռ Ո Ւ Ջ Ո Ր Ը

Այն Լոռու ձորն է...
Հովհ. Թումանյան

Այս Լոռու ձորն է... վոր անպես սիրով
չերգել է մի որ մեծ պոետը մեր.
Գեռ, թվում է թե, նրա հուշերով
լի յեն այս ձորի անունն ու ծերայեր...
Բայց դա մի պահ է, վոր բանաստեղծի
գլուխից չերգերի պատրանքին հլու՝
թռչում է հողից անսանձ, սլացիկ՝
գեպի ան, ինչ վոր ել չեա չի գալու,
Ո՛ւր են անուններն սիրած պոետի,
Դուր է անց կյանքը ժպտախառ լացով,
Դուր են անուններն չարքերը հրապիրտ,
Սաքոյի գոմը՝ լի նենգ կանանցով...
Յընգել են նրանք, մշուշում սահել,
Ֆնացել են լուկ այս ձորը, ժայռեր,
Իրիւրած Դեմ-Բեդի գոշումը անհղ
և բանաստեղծի չերգերը անմեռ:

Այս Լոռու ձորն է... ջրի չեղերքով
գալարվում են զուլգ չերկաթի գծեր՝
նետված հլուսիսից մի ծանր ձեռքով,
վոր այս աշխարհի գանձերը հնձեն:

Բռնութ, ան ուժն է այս ուղին ձեռք,
վորի վրայով Մոլոխը ոռոտի
պիտի աբշավեր դեպի Արևելք՝
նստելու նրա մտքակված ուսին:
Հենց այս չերկաթի շաչ ու շառաչից
թվաց՝ պիտ վառվի այս չերկրում մի ջահ...
բայց փոխվեց հույսը անհույս հառաչի,
վոսկու լծի տակ գլուղները իջան...
Հիմա այս գծով հոսում է մի անց,
նորոգված կյանքի արշուճը բոսոր...
Վողջույն քեզ, գալիք, պայծառ, հրապիրտ,
վողջույն՝ ապագան կառուցող այսոր:

Այս Լոռու ձորն է... ժայռերն անագին,
վորպես հրականներ՝ վոտները ձորում,
պահում են իրենց անխոնջ քամակին
լեռներին կրթթնած գլուղները Լոռու:
Հենց այս ժայռերից, տարիներ առաջ,
ժայռերի վրա թառած գլուղացին
քարերով ձորի այս ճամբան առավ,
առավ ու կապեց մեծ, կարմիր գծին:
Այդ որից հետո հորդեց այս ձորով
վերջին կռիվը աշխատող մարդու,
հորդեց մեծ կամքը այս զուլգ գծերով,
վոր հին աշխարհի հիմքերն է քանդում:
Այս զուլգ գծերը գնում են, հասնում
հին Արևելքի դռան, ուր հողի
և մուրճի մարդը զիզում է ցասում՝
մի նոր աշխարհի պոռթկումով հղի:

Այս Լոռու ձորն ե... ալստեղ պղինձն ե,
 պղինձը՝ ձուլված հողին ե քարին,
 պղնձի համար մեր կամքը թրթռել,
 չեղել ենք ահա կրկին պաշարի:
 Քանդում ենք ահա արդանդը հողի,
 վոր թագցրել ե իբ գանձերը լուռ.
 խլում ենք, քամում պղինձը գեղին՝
 նոր աշխարհ, նոր կյանք վերածուլելու:
 Ահա չեղնում ե ծուխը կաթնագուլն,
 ձուլվում ամպերին՝ Լալվարի վրա.
 հալվում ե քարը, կրակ ե թքում,
 ծընվում պղինձը՝ հեղուկ ե կրակ:
 Քանդում ենք, չկա հանգիստ ե անդորր,
 կյանքին տրվում ե նոր իմաստ ու ձև:
 Դեռ չերբեք, չերբեք ալսպիտի խանգով
 մարդը չի քանդել ե չի կառուցել:

Այս Լոռու ձորն ե... գետը սրբընթաց
 նոր մարդու կամքով պիտ կանգնի մի պահ,
 ուռի, գալարվի, մի նոր հուն գտած՝
 հենց ժաշուի միջով հոսելու ապա:
 Սարի արգանդում վոլորվելով նա,
 թունելի վողորկ կողերին բաղխվի,
 հսկա ոձի պես դուրս պիտի սողա՝
 մի ուրիշ ժաշուի շթթունքից կախվի:
 Մեղմված լայնափող, ամուր տուրբինով՝
 խոշանա պիտի կրկին դեպի վար,
 մինչև վոր հասնի, հոսի նոր հունով,
 նրանից արդեն կլինեն քամված
 (ստեղծող մարդու ձեռքերով հղոր)

անսպառ ուժեր ե խուրձեր լուսի...
 Այստեղ մեր ձեռքով կանգնում ե ալսոր
 ելեքտրոկայանը Ջորագետի:

Այս Լոռու ձորն ե... ուր Ջորագետի
 մեծ ամբարտակն ե, այս ժաշուի վրա,
 մեծ մարտնչովի ե առաջնորդի
 հըսկա արձանը պիտի բարձրանա:
 Պիտի բարձրանա Լենինը, նա, վոր
 հեղափոխության մեր հանձարն ե մեծ՝
 պողպատե կամքով, վոր միլիոնավոր
 մարտնչողներն ուժերը խմբեց
 ե հեղեղեցիկ կարմիր որերին
 տվեց բախտորոշ, վճռական գրոհ,
 հին կյանքը մատնեց կործանման հրին,
 վոր նորը ծնվի ալդ կարմիր հրով:
 Պիտի բարձրանա արձանը, վորպես
 պաշարի դրոշ, վորպես հաղթանակ,
 վոր նրա կոչով նորեր գան հանդես,
 ե կյանքն իր անհայտ գանձերը բանա:

Այս Լոռու ձորն ե... շուտով այս ձորում
 անիվներ, փոկեր պիտի դրդըրդան,
 հուժկու, հոյակապ ալդ նոր ժխորում՝
 փոխվի պատկերը վայրի բնության:
 Ավելի շքեղ, չըքնաղ, գեղանի
 պիտի փայլիլի զմրուխտն անտառի,
 չերբ Ջորագետը հաղարաչքանի
 ալստեղ չերկրային աստղերը վառի:
 Ժաշուրը կախված անդունդի վրա՝

չեն լինի մռայլ չարքի ոթեան,
լուսով վողողված ջրում գիշերվա,
յերբ նրանց խորհող գլուխն չբեւա:
Վողջույն քեզ մարդն, նոր մարդու կռիւ,
բնությունը փոխող, նոր իմաստ ծընող, —
դու լրացնում ես բնության թերին
մարդու հոյակապ ստեղծագործումով:

Այս Լոռու ձորն ե... քաջով ախտանի
սյուները ձորից բարձրանում են վեր,
հասնում տներին այն գլուղաստանի,
վոր սեզ լեռների լանջին և հենվել:
Շուտով, ո՛ր, շուտով պիտի սյուների սյուն
բարձրանան ձորից առուներ լույսի,
անցնեն գլուղի-գլուղ, անցնեն տնե-տուն,
խնդությամբ լեցնեն ամեն տուն ու սիրտ:
Նա՛ վոր թշնամուց քարե կարկուտով՝
այս ձորը խլեց՝ զարկով մահացու,
այդ ձորից, ահա, կըստանա շուտով
իր զարկի շանթը, լույսը՝ հատուցում:
Կըստանա լույսը. ուժը կըստանա,
վոր խոր ազոսի հին գլուղերն այս մառ,
վոր այս կռիւն լարվի, խստանա,
վերջին թշնամին վերանա իսպառ:

Այս Լոռու ձորն ե... մեր աչքի առաջ
փոխվում են նրա անդունդները խուլ,
ու փոխում ե նա մեր կյանքը արագ՝
ինչքան վոր արագ նրան ենք փոխում:
Նա, — ով պղինձ և ձուլում այս ձորում,

ով հսկում և այս չերկաթե ուղին,
ով Ձորագետի թունելն ե փորում,
վոր Ձորագետի ընթացքը փոխի,
ով ահատել, վերե, լեռների ծոցում,
փոքրիկ տըները իմի հավաքած՝
սոցիալատական գլուղն ե կառուցում,
ով ստեղծում և պայծառ ապագան, —
կըրծքի տակ ունի, արյան մեջ, անհուն
սերը՝ գալիքին, քենը՝ անցյալին,
լեւ այսօրվա մեջ ժաման և մահանում,
և այսօրվա մեջ աճում՝ անձկալին:

Այս Լոռու ձորն ե... միայն մի անկյուն
մեր Սորհրդային լայնածիր չերկրում,
ուր մասսաները համառ, անընկուն
համայն աշխարհի նոր բախտն են կըռում:
Ամեն, ամեն տեղ, ուր հինգթեանի
ասուղն և վառ փալում և կարմիր դրոշ,
բուրնկված են այս նոր, արագանիւ
վերակառուցման սաստկացած հրով:
Այս չերկու գիծը, չերկիր Հայաստան,
կապում են հողդ Մեծ Հայրենիքին,
և դու ստեղծագործ ուժերիդ վստահ՝
կերտում ես այստեղ մասը գալիքի:
Հինը փլչում ե, նոր կյանքն և ցընծում.
սահմանավորումն ավելի խորն ե,
քան այս ճեղքվածքը լեռների ծոցում,
քան այս անդունդը... այս Լոռու ձորն ե:

Կ Ա Ռ Ո Ւ Յ Ո Ւ Մ Ը

Ք Ի Մ Շ Ե Ն Ի Ն

1.

Այս ձորում, ուր մի վիթխարի մկրատ
խուզել է փեշերն անտառի, ահա,
այդ լեռնալանջի բացատի վրա
բարձրանում է այսօր մի ափսոսանք:

Նա մեկն է, այն հսկաներից մեկն է,
վոր հընգամյակի վճռական տարում,
ինգուստրիկ շնչով մեր չերկրին պետք է
բերի նոր աճման զսպանակ, լարում:

Ու թվում է ինձ՝ թե կանաչ գորգին
հեքյաթային հսկաներ են բազմել,
չեմ այս ձորափին, անառիկ կողքին,
մի հաղթանակի խնճուկք են կազմել:

Նստել են ահա հաստատ, աներեր,
հսկա շենքերն այս ձորում հմայուն,
լեռների ծոցում այս, ուր դեռ չերեկ
վոչխարներ ելին արածում, մայում:

Նստել են շենքեր, ընց ելի, ելի
չենում են նորեր, ամեն ուր աճում,
վորպես տեմպերի հատակ հայելի,
աբտացում են վերելք, նվաճում:

Ահա քարերի վիթխարի կույտեր
չեմ շեղջեր ահա, շեղջեր ավազե,
ահա չերկաթը,—զանգվածը նյութե,
վոր կյանք առնելու շնչին կսպասե:

2.

Ահա քարերը և չերկաթն, ահա
ավազը,—մեր նոր, ստեղծագործող
մտքին ու կամքին, տեմպին չենթակա՝
ձևավորում են նորիմաստ գործով:

Հենց այս քարերից, հենց այս չերկաթից
կառուցվում էր մեր չերկում դեռ չերեկ
բանտ կամ մի ֆաբրիկ՝ հենց նման բանալի,
վոր հազար-հազար նոր կյանքեր գերեր:

Կառուցվում էր նա մտրակի ուժով,
չոր հացով ծախված ուժով մարդկային,
մարդը կերտում էր, մարդը դառնում զոհ,
վոր իրեն մի չոր կտոր հաց տային:

Ո՛ր, քար ու չերկաթ, ու հող, ապակի,
դուք կարող ելիք ուրիշ մի ուժով
դառնալ տանջարան մարդկային կյանքի,
ուր ցնորք դառնալ արևի մի շող:

Բայց աշխատանքը՝ առանց զրկանքի՝
նոր աշխատանքի վողին ե կռում,
ու դուք դառնում եք մարդկային կյանքի
մեծ չեղձանկության հիմքը այս յերկրում:

Յեվ ուժը, ուժը մեր այս կառուցող,
վոր ձեզ տալիս ե նոր ձև ու իմաստ,
զրանից բացի իր ազատ գործով
ուրիշ ելուծյուն չի կերտում հիմա:

3.

Ահա բանակը մեր, վոր դեռ չերեկ,
իր վողնաշարը դարձրել եր սյուն
յեվ ինքը կըքած՝ պահում եր վերև
վոսկու ե զենքի մի իշխանություն:

Ահա բանակը մեր, վոր Լենինյան
մեծ պատգամներով շաղկապված ի մի,
կառուցում ե նոր աշխարհը հիմա,
աշխարհն ապագա՝ մոտեցող հիմի:

Ահա բանակը, թեև միաձուլ
ամբողջությունն ե հերոսն աժդահա,—
իր հերոսության պատկերն ե գծում
այդ ամբողջության մեջ ե ամեն անհատ:

Խանդավառության միևնույն վողին
յեվ աշխատանքի փառքը մեր դարի
մղում են այստեղ, մղում ամենքին
նոր հաղթանակի ու նոր պայքարի:

Այստեղ ամենքի, ամենքի դեմքին,
ով մի ազգուս ե դնում հնաքանդ
այս կառուցման մեջ, վառվում ե մեկին
Լենինյան դարի խոհը հոյակապ:

Ուզում ե ամեն մեկը նվիրել
այս կառուցմանը այնպիսի մի բան,
վոր գերազանցի հենց ինքը իրեն,
ու ծավալվում ե ցանցը մրցության:

4.

Այստեղ — լեռների վրդովված գրկում,
ամբողջ աշխարհի հիմքերը ցնցող
նոր աշխատանքի հիմն ե զրնգում,
ձևավորվում ե նոր կյանքը գործով:

Այստեղ ամեն մի պտուղտն անիվի
մղելու չե մեր կյանքը սրարշավ
դեպի այն, վորին բյուր գոհեր տվինք,—
սոցիալիստական հոյակապ աշխարհ:

Ու դրա համար առողջան մեր այս՝
չերբեմն ծանր, չերբեմն դժվար,
մեր հերոսական ուսերի վրա
տանում ենք համառ, տոկուն, անշվար:

Ո՛ր, վորքան, վորքան հոգիդ ե բերկրում,
յերբ քո առողջա փոքրիկ գործի մեջ
մի նոր, փառավոր աշխարհ ե չերկնում
իր մի մասնիկը, լուսավոր մի եջ:

Յեւ ահա, ահա այս լեռնակողին,
այս անտառների չեղրին մկրտված,
մեծ կառուցման մեծ խնդուտորիկ ուղին
ձևավորվում է հաբված առ հարված:

Այստեղ ձև առնում, մարմին է առնում
սոցիալիստական կյանքի մի մասնիկ,
թևավորվում է, թռիչքներ առնում,
վոր ամբողջական ընթացքին հասնի:

Գ Ի Շ Ե Ր Վ Ա Յ Ե Ր Գ Ը

Սաղաղություն, խաղաղություն խորին
այս գիշերում, աշխատանքից հետո.
ու անցնում են շաբան-շաբան նորից
խոհեր, մտքեր, հույզեր ու սեր հերթով:

Յեւ լսում եմ այս խոր լռության մեջ
մի հեռավոր չեբդի անուշ կարկաշ...
հույզերի մի հանդարտ, լուռ չեղեջ,
ապրումների պահեր՝ խոր, անկասկած:

Մազիկներով ելեկտրական լամպի՝
կարկաշում են առվակները սարի-
կարկաշը լույս, լույս է դարձել անբիծ,
հիլ է լույսը՝ չերգ, չերգը՝ լույս արել...

Աշխատանքը, մաքրը, մարդն է քամիչ,
քամում է տարերքը՝ քար, ջուր է հող.
նա սանձում է ջուրը, քարը, քամին,—
աշխատանքին, կերտող մարդուն՝ ներբող:

Ահա, ահա լամպը՝ բռունցքի պես,
այդ բռունցքում ճգմըվում է, քամվում
տարերային ուժը՝ ջուրը, ջրվեժ,—
ու նրանից լույս է, լույս է հանվում...

Գիշերվա հանգստի անս խակ պահին
յես լսում եմ լերգեր վառ, չմարող.
մոռնում են, բաղխվում ուժեր տարեբային,
մարտնչում ե մարդը միշտ պայքարող:

ՄԱՀ ՅԵՎ, ՅՆԾՈՒԹՅՈՒՆ

Հանգիստում եմ դեռ նրան, սրնգահար այն կույրին,
վոր Շահումյան փողոցում, հենված փլշող մի պատի,
շուրթերն հանձնած սրնգի մեղրածորան համբույրին,
իր լերգերն ե կաթեցնում ախորժալուր, հանդարտիկ:

Սրինգը ինձ թվում ե մի լեռնային ջինջ առվակ,
ու հոսում ե նրանից կույրի լերգը, վորպես ջուր,
մերթ ճշում ե անդ լերգը՝ սահանքներից ուժ առած,
մերթ մրմնջում տխրածայն, մերթ ել ուրախ խոխոջում:

Վորքան, վորքան հեռու չե, միայն աչքերդ փակած
դու կարող ես հշմարել ահը, ահը այդ լերգի.
բայց լերգողը, սրինգը, սրնգի լերգն ահա կան,
մայթի վրա տեսնում ես ե լսում այդ լերեքին:

Քեզ ոտար ե թվում այդ խորթ ե հնչում ահանջիդ
այդ հովվական սրնգի շունչը տխուր նվագուն,
ունկընդիր ես որերի գլրդացող շառաչին,
բայց ինչ վորքան այդ լերգից հարազատ ե քո հոգուն:

Մեռնում ե նա, այդ լերգը, այդ սրինգը հովվական,
բայց զգում ես, զգում ես, վոր քո հոգում ել նույնպես
մեռնում ե մի ախուր բան, փոխվում ե մի ինչ վոր բան,
դու ապրում ես, բայց վաղը չես ճանաչի ել դու քեզ:

Այդ մահի մեջ հնչում ե մի անսահման ցնծութիւն,
ինչպէս հատիկն ե մեռնում, մեռնելիս ծիլ արձակած,
ծիլը կանաչ խնդութիւն, վոր ծաղկում ե հաղար դուչն
յեւ ծիծաղում, ասես թե՛ մահի վրա չե ծաղկած:

Ո՛, ցնծացեք, ցնծացեք, մայթեր քանդվող, կառուցվող,
ցնծան, սրինգ, վոր հիմա տխուր քո յերգն ե մեռնում,
ցնծան քաղաք՝ մահի դեմ, ցնծան, յերկիր, ցնծան, հող,
սրտեր, սրտեր, ցնծացեք, ցնծութիւն յերգն ե յեղնում:

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅԵՐԳ

Հաղթանակի տարեդարձ,
պաշտարների նոր խթան,
թող շեփորեմ յերգը քո,
յերգը կովի՝ սըրընթաց,
յերգը կարմիր հաղթութիւն՝
նոր մարտերը բորբոքող:

Նոյնմերցան սուրը մերկ
իմ աչքերում շողա թող
յեւ շափաղե սրտում իմ,
շողը դառնա կովի յերգ
յեւ բանակին մեր հաղթող
հանե վերջին յերգումի:

Ֆարրիկներում, հանքերում
բանվորական ձեռքեր պիրկ
բարձրանան նոր լարումով,
ու կովի մեր չեռուն
հաղթանակի դիրք առ դիրք՝
վերջին դիրքի առումով:

Համայնական դաշտերում
հավաքական կամքը թող
բարձրանա նոր հորձանքով,
ու նոր գլուղը՝ աններում
հին կապերը կտրատող՝
ապրի, շնչի նոր կյանքով:

Նույնքերյան տարեդարձ,
հաղթանակի խնդություն,
հաղթանակի նոր դրոշ.
այդ հաղթությամբ վեհապանծ
մեծ կառուցման ճակատում
թող բորբոքվի նոր գրոհ:

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԼԻՐԻԿԱՆ

Ն Ո Ր Ի Յ Ե Ր Գ Ը

Սոցիալիստական աշխարհն հոյակապ
կառուցվում է իմ աչքերի առաջ,
քանդումի, կերտման անեղ զոյամարտ,
պայթեցման, ստեղծման զղիլը ու շտապը:

Որից որ լինում, աճում ժամե ժամ,
բարձրանում է այդ շենքը վերթաբեր,
ու բորբոքվում է կռիվը դաժան
իրաք հակադիր լերկու աշխարհի:

Յերկու աշխարհի՝ լերկու դասակարգ,
լերկու աշխարհի՝ հին ու նոր մարդու,
լերկու աշխարհի՝ մի տան հարկի տակ,
լերկու աշխարհի՝ միևնույն սրտում:

Կերտվում է նորը իմ աչքերի դեմ,
կերտում եմ և լեռ մեր մեծ բանակում,
նրա անպարփակ ծավալը արդեն
պարփակում եմ իմ անսահման հոգում:

Տեսնում եմ նրան պայծառ աչքերով,
շողափում, զգում մասնիկ առ մասնիկ...
Ջրգտում է կերտող բանակը հերոս՝
զործով իր մտքի թռիչքին հասնի:

Ն Ո Ր Ի Յ Ե Ր Գ Ը

